ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

03.05.2019Թ. N 04 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մայիսի 2019 թվականի N 43

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 03-Ի N04 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի.

Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 03-ի N04 արտահերթ նիստի օրակարգը.

1.Հրազդան համայնքի 2019 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե գումար հատկացնելու մասին
2.Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 179-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
3.Գումարը հետ վերադարձնելու մասին
4.Սուբվենցիայի հայտին հավանություն տալու մասին
5.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողերը մրցութային կարգով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
6. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
7. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերը ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
8. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին

9. Հողամասերի փոխանակություն կատարելու մասին

Կողմ -8 *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

03 մայիսի 2019թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մայիսի 2019 թվականի N 44-Ն

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի.

Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրազդան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 179-Ն որոշմամբ հաստատված բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարել հետևյալ հատկացումները՝

Ծախսային մաս՝

1. 5 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի «Տրանսպորտային սարքավորումներ» /5121/ հոդվածին 20000.0 հազար դրամ բազմաֆունկցիոնալ մեքենա ձեռք բերելու համար: «Աղբահանություն և սանմաքրում բյուջետային հիմնարկին «Այլ մեքենաներ և սարքավորումներ» /5129/ հոդվածին 3400.0 հազար դրամ աղբամաններ ձեռք բերելու համար:

2. 6 բաժնի 6 խմբի 1 դասի 51 ծրագրի «Նախագծահետազոտական ծախսեր» /5134/ հոդվածին 990.0 հազար դրամ նախագծահետազոտական ծախսերի համար, «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» /5113/ հոդվածին 23000.0 հազար դրամ բազմաբնակարան շենքերի վերելակների կապիտալ վերանորոգման աշխատանքների համար:

3. 4 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» /5113/ հոդվածին 88940.5 հազար դրամ փողոցներ և ճանապարհների կապիտալ վերանորոգում կատարելու համար:

Կողմ -8 *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

03 մայիսի 2019թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մայիսի 2019 թվականի N 45-Ն

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 179-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի.

Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրազդան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 179-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Եկամտային մասում՝

1) «Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ» տողի «5354.1» թիվը փոխարինել «5396.75» թվով:

2) «Դատարանի որոշումներով համայնքի բյուջե մուտքագրվող եկամուտներ» տողի «0» թիվը փոխարինել «101319.5» թվով:

2. Ծախսային մասում՝

1) 1 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի «Էներգետիկ ծառայություններ» /4212/ հոդվածում «39000.0» թիվը փոխարինել «48500.0» թվով, «Կապի ծառայություններ» /4214/ հոդվածում «4300.0» թիվը փոխարինել «3300.0» թվով, «Տրանսպորտային նյութեր» /4264/ հոդվածի «5000.0» թիվը փոխարինել «4500.0» թվով, «Պարգևատրումներ» /4112/ հոդվածի «9800.0» թիվը փոխարինել «300.0» թվով, «Տրանսպորտային սարքավորումներ» /5121/ հոդվածի «6675.8» թիվը փոխարինել «0» թվով:

2) 1 բաժնի 3 խմբի 1 դասի 51 ծրագրի «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» /4111/ հոդվածում «4896.9» թիվը փոխարինել «4770.55» թվով,

3) 4 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» /5113/ հոդվածում «25500.0» թիվը փոխարինել «32175.8» թվով, «Շենքերի և շինությունների

ընթացիկ նորոգում և պահպանում» /4251/ հոդվածում «48644.0» թիվը փոխարինել «33644.0» թվով:

4) 5 բաժնի1 խմբի 1 դասի 51 ծրագրի «Աղբահանություն և սանմաքրում» բյուջետային հիմնարկի «Պարտադիր վճարներ» /4823/ հոդվածի «400.0» թիվը փոխարինել «436.0», «Մաքուր Հրազդան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին» /4511/ հոդվածում «58340.0» թիվը փոխարինել «53340.0» թվով:

5) 5 բաժնի 6 խմբի 1 դասի 55 ծրագրի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» /4239/ հոդվածի «500.0» թիվը փոխարինել «0» թվով:

6) 9 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին» /4511/ հոդվածում «433404.0» թիվը փոխարինել «420404.0» թվով:

7) 10 բաժնի 7 խմբի 1 դասի 54 ծրագրի «Գույքի և սարքավորումների վարձակալություն» /4216/ հոդվածում «100.0» թիվը փոխարինել «222.0» թվով:

8) 11 բաժնի 1 խմբի 2 դասի 51 ծրագրի «Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ» /4891/ հոդվածում «3866.3» թիվը փոխարինել «140196.8» թվով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

03 մայիսի 2019թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մայիսի 2019 թվականի N 46

ԳՈՒՄԱՐԸ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի , հիմք ընդունելով Կոտայքի մարզի, Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 311 շենքի 14 բնակարանի բնակչուհի Մարիտա Մարտիրոսյանի 2019 թվականի ապրիլի 11-ի N Կ-503, Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 14/Ա տնակի բնակիչ Վլադիմիր Զաքարյանի 2019 թվականի ապրիլի 18-ի N Կ-539 դիմումները.

Հրազդան համայնքի ավագանին <u>ՈՐՈՇՈՒՄ Է</u>՝

Հրազդանի համայնքապետարանի 900125001215 հաշվեհամարին, որպես փոխադրամիջոցի համար գույքահարկ վճարված գումարներից հետ վերադարձնել վաճառքից հետո առաջացած գերավճարի չափով Կոտայքի մարզի, Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 311 շենքի 14 բնակարանի բնակչուհի Մարիտա Մարտիրոսյանին 5067/հինգ հազար վաթսունյոթ/ դրամ, Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 14/Ա տնակի բնակիչ Վլադիմիր Զաքարյանին 4919 /չորս հազար ինը հարյուր տասնինը/ դրամ:

Կողմ -8 *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

03 մայիսի 2019թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մայիսի 2019 թվականի N 47

ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՅՏԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N1708-Ն որոշման 2-րդ հավելվածի 12-րդ կետի 2-րդ ենթակետով.

Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հավանություն տալ 2019 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով հետևյալ ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերին.
1)Հրազդան համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության նորոգում /բազմաբնակարան շենքերի վերելակների նորոգում/: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 40,0 միլիոն ՀՀ դրամ:
2)Բազմաֆունկցիոնալ մեքենաների ձեռքբերում: Ծրագրի ընդհանուր արժեքը 29,8 միլիոն դրամ:
3)Հրազդան համայնքի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման ծրագրի կազմակերպում: Ծրագրի ընդհանուր արժեքը 215,0 միլիոն դրամ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ -8 *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

03 մայիսի 2019թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մայիսի 2019 թվականի N 48

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի.

Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

Թույլատրել մրցութային կարգով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հետևյալ վարելահողերը.
1.Ջրառատ թաղամասում գտնվող 2.326429 հա մակերեսով, երկրորդ կարգի ջրովի, 32570 (երեսուներկու հազար հինգ հարյուր յոթանասուն) դրամ մեկնարկային վարձաչափով (կադաստրային ծածկագիր՝07-001-0883-0009), մեկ քայլի չափը՝3260 դրամ:
2. Ջրառատ թաղամասում գտնվող 2.049063 հա մակերեսով, երկրորդ կարգի ջրովի, 28690 (քսանութ հազար վեց հարյուր իննսուն) դրամ մեկնարկային վարձաչափով (կադաստրային ծածկագիր՝07-001-0883-0008), մեկ քայլի չափը՝2870 դրամ:
3. Վանատուր թաղամասում գտնվող 1.0 հա մակերեսով, երկրորդ կարգի անջրդի, 12000 (տասներկու հազար) դրամ մեկնարկային վարձաչափով (կադաստրային ծածկագիր՝07-001-0992-0022), մեկ քայլի չափը՝1500 դրամ:

Կողմ -8 *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

03 մայիսի 2019թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մայիսի 2019 թվականի N 49

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետի.

Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

Թույլատրել մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում ընդգրկված, Կենտրոն թաղամաս թիվ 70/9 հասցեում գտնվող 40.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 24000 (քսանչորս հազար) դրամ մեկնարկային վարձաչափով, 99 (իննսունինը) տարի ժամկետով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0465-0027):

Կողմ -8 *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈՒԼՈՂՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

03 մայիսի 2019թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մայիսի 2019 թվականի N 50

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՉ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի.

Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում ընդգրկված բնակավայրերի նպատակային նշանակության հետևյալ հողամասերը.

1.Միկրոշրջան թաղամաս թիվ 93/10 հողամասը՝ 20.0 քմ (ավտոտնակ կառուցելու)՝ 5000 (հինգ հազար) դրամ տարեկան վարձավճարով՝ 99 (իննսունինը) տարի ժամկետով:
2.Կենտրոն թաղամաս թիվ 54/29 հողամասը՝ 20.0 քմ (ավտոտնակ կառուցելու)՝ 5000 (հինգ հազար) դրամ տարեկան վարձավճարով՝ 99 (իննսունինը) տարի ժամկետով:
3.Կենտրոն թաղամաս 54/30 հողամասը՝ 20.0 քմ (ավտոտնակ կառուցելու)՝ 5000 (հինգ հազար) դրամ տարեկան վարձավճարով՝ 99 (իննսունինը) տարի ժամկետով:

Կողմ -8 *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄՈՒՐԱՂՅԱՆ ԽԱՉԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

03 մայիսի 2019թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մայիսի 2019 թվականի N 51

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի.

Հրազդան համայնքի ավագանին <u>ՈՐՈՇՈՒՄ Է</u>՝

Աճուրդային կարգով օտարել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող հետևյալ հողամասերը.
1.Վանատուր թաղամաս 371/1 հասցեում գտնվող 88.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 110000 (մեկ հարյուր տասը հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0325-0044):
2.Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ թիվ 20/1 հասցեում գտնվող 324.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 953000 (ինը հարյուր հիսուներեք հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0442-0117):
3.Միկրոշրջան թաղամաս, 8-րդ փողոց 14/1 հասցեում գտնվող 53.5 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 105000 (մեկ հարյուր հինգ հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0511-0036):
4.Մ.Բաղրամյան թաղամաս, 5-րդ փողոց 24/1 հասցեում գտնվող 139.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 267000 (երկու հարյուր վաթսունյոթ հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0510-0152):
5.Կենտրոն թաղամաս 25/8 հասցեում գտնվող 52.1 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 154000 (մեկ հարյուր հիսունչորս հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0433-0031):

6.Միկրոշրջան թաղամաս, 13-րդ փողոց 8/4 հասցեում գտնվող 36.61 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 71000 (յոթանասունմեկ հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0511-0034):

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

03 մայիսի 2019թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մայիսի 2019 թվականի N 52

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ բաժնի 30 կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի, հիմք ընդունելով Մարատ Մարգարյանի 2019 թվականի ապրիլի 30-ի դիմումը.

Հրազդան համայնքի ավագանին <u>ՈՐՈՇՈՒՄ Է</u>՝

Թույլատրել Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի թիվ 30/8 հասցեում գտնվող Մարատ Մարգարյանին կառուցապատման իրավունքով տրամադրված (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 01042016-07-0017, գաղտնաբառ՝ W7QT9IJJSJS9) հողամասը փոխանակել Կենտրոն թաղամասի 30/32 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 17042019-07-0057, գաղտնաբառ՝ GVNQAFKKB8CA) հողամասի հետ՝ պահպանելով հատակագծային չափերը և մակերեսները:

Կողմ -8 *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՈՒԵԼ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

03 մայիսի 2019թ.
ք.Հրազդան